

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՌԱԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(համաժամանակյա հայեցակետ)

Բանալի բառեր – եռաբարբառ, եռաբարբառակերպ, հին հայերեն, ավանդական ըմբռնում, լ (w) և յ (y) ձայնորդներ

Ի տարբերություն հին հայերենի երկբարբառների, որոնք հատկապես համաժամանակյա հայեցակերպով հանգամանալից քննության նյութ են դարձել հայերենագիտության մեջ, եռաբարբառների քննությունը կրել է հպանցիկ բնույթ: Ինչպես երկբարբառների, այնպես էլ եռաբարբառների դեպքում կարևոր հարցերից մեկը նրանց կազմի ճշտումն է, որը, հասկանալի է, ի թիվս այլ հանգամանքների (օր.՝ դիրքային արտաբերության), պայմանավորված է բուն երկբարբառի/եռաբարբառի՝ որպես հնչարանական իրողության ըմբռնումով:

Հին (իմա՝ գրաբարյան) հայերենի եռաբարբառների կազմի վերաբերյալ ևս, ինչպես և երկբարբառային կազմությունների դեպքում, քերականների պատկերացումները տարբեր են, չնայած այն իրողությանը, որ բոլոր հայերենագետներն էլ ընդունում են եռաբարբառների նույն բանաձևը «V₁+V₂+S» (հմմտ. *էայ, էաւ*) կամ «S+V₁+V₂» (հմմտ. *ւոյ*)¹: Այսպես, Մ. Աբեղյանը գրաբարում ճանաչել է նշված երեք՝ *էայ* (պաշտան*էայ*), *էաւ* (արդ*էաւք*), *ւոյ* (այգ*ւոյն*), եռաբարբառների գոյությունը²: Հ. Աճառյանը, դրանցից բացի, տարբերակել է նաև *էայ, ուոյ, էիւ, ուաւ* եռաբարբառներ³: *էայ* և *էիւ* եռաբարբառներ ընդունել է նաև Ս. Ղազարյանը⁴: Ա. Աբրահամյանը և Վ. Առաքելյանը, վերոհիշյալ երեք եռաբարբառներից բացի, *իայ* եռաբարբառ են տարբերակել *սիայն* բառի կազմում⁵: Գ. Ջահուկյանը եռաբարբառների վերջավոր

¹ V-ն լատ. vokalis «ձայնավոր», իսկ S-ը sonoris «ձայնորդ» բառերի սկզբնատառերն են: Երկբարբառների դեպքում բանաձևն ունի «V+S»/«S+V» կամ «V₁+V₂» տեսքը:

² Տե՛ս **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. 2, Երևան, 1974, էջ 715:

³ Տե՛ս **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, հ. VI, 1971, էջ 151, 224: «Հայոց գրերը» աշխատության մեջ *էաւ*-ի փոխարեն նշվում է *իաւ*, որ, անշուշտ, վրիպակ պիտի համարել, որովհետև նրա լատինական տառադարձումն է éaw, ինչպես որ *էայ*-ինը՝ éay (տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 593):

⁴ Տե՛ս **Ղազարյան Ս. Ղ.**, Հայոց գրական լեզվի պատմություն, Երևան, 1961, էջ 176:

⁵ Տե՛ս **Աբրահամյան Ա. Ա.**, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 5, **Առաքելյան Վ.**, Գրաբարի քերականություն, Երևան, 2010, էջ 16: Վ. Առաքելյանը գրաբարում տարբերակել է նաև *իա* երկբարբառ (հմմտ. *սիակ, սիականի* և այլն), որը, սակայն, մեր կարծիքով, արդարացված չէ, որովհետև այն բառերում, որոնցում առկա է այդ հնչյունական հաջորդականությունը, *ի*-ն և

ցանկ չի ներկայացնում: Նրա դիտարկումները ուշագրավ են հատկապես այն առումով, որ, եռաբարբառների գրային նշանակումներից բացի, տալիս է նաև դրանց հնչյունական արժեքները (հմմտ. *եսյ* [iai], *եսու* [iau], *ւոյ* [uoi]: Ըստ այդմ՝ ձայնորդական բաղադրիչներին ևս ձայնավորական հնչյուն է վերագրվում¹: Է. Թումանյանը հիմնականում հետևում է Է. Աղայանին՝ տարբերակելով *եսյ*, *եսու*, *ուայ*, *ուաու*, *ուոյ* եռաբարբառները²: Հին հայերենի եռաբարբառների տարբերակման հարցում հստակ չէ Հ. Մուրադյանի դիրքորոշումը. բացառելով *ու-* սկզբնաբաղադրիչով եռաբարբառային կազմությունները հին հայերենում՝ նա մերթ ճանաչում է միայն երկու եռաբարբառի գոյությունը՝ *եսու*, *եսյ* (ընդ որում՝ երկրորդը՝ [իայ] հնչյունական արժեքով)³, մերթ էլ չորս՝ ավելացնելով նաև *իայ-ը* և *ւոյ-ը*⁴:

Եթե հին հայերենի երկբարբառների զգալի մասը սերում է հ.-ե. նախալեզվի երկբարբառներից⁵, ապա եռաբարբառային կազմությունների համար հ.-ե. նախաձևեր հնարավոր չէ ցույց տալ, որքան որ նախալեզվի համար այդպիսիք պարզապես չեն վերականգնվում:

Գրաբարյան հայերենում քերականների կողմից տարբերակվող եռաբարբառները, մեր կարծիքով, *եռաբարբառակերպեր* (triphthongoid) են, որովհետև դրանք ունեն *յ* (*y*) կամ *ւ* (*w*) ձայնորդական բաղադրիչը, իսկ ձայնորդները հին հայերենում վանկարար գործառույթ չեն իրականացրել: Իհարկե, տարածամանակյա քննության տեսանկյունից «եռաբարբառ՝ *ո*, թե՛ եռաբարբառակերպ» հարցադրումը սկզբունքային նշանակություն չունի, այն կարևոր է համաժամանակյա հայեցակերպում:

Հին հայերենի *ու-* սկզբնաբաղադրիչով եռաբարբառային կազմությունները՝ *ուայ* (*լուայք* «լսեցիք»), *ուաու* (հով*ուաւք* «հովիվներով»), *ուոյ* (պատան*ուոյն*), եռաբարբառներ կարող են համարվել պայմանականորեն՝ երկու կիսաձայնի՝ *ւ* և *յ*, առկայությունը մեկ վանկի կազմում մեկ ձայնավորի համարժեք դիտելու դեպքում, որովհետև մեր համոզմամբ *ու-*ն հին հայերենում չի եղել պարզ ձայնավոր, այլ եղել է *երկբարբառակերպ* (diphthongoid), ինչպես և *աւ*, *եւ*, *իւ*, *այ*, *ոյ* կազմությունները: *Ու-*ն պարզ ձայնավոր համարելու միտումը հայերենագիտության մեջ, ըստ ամենայնի, գալիս է Հ. Հյուբշմանից և Ա. Մեյլեից: Ըստ Հ. Հյուբշմանի՝ «ու տառանշանը, բաղարկված $n=0+1=u\dots$ ոչ այլ ինչ է, բայց եթե հունական *ou*-ի ընդօրինակումը և նախկինում (ինչպես այն) = *u*

*ա-*ն պատկանում են տարբեր վանկերի (տե՛ս **Պետրոսյան Վ. Զ.**, Հայկական և հնդեվրոպական երկբարբառային համակարգերը // «Վեմ», 2015, թիվ 3, էջ 116-117):

¹ Տե՛ս **Джаукян Г. Б.**, Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982, էջ 28:

² Տե՛ս **Աղայան Է. Բ.**, Գրաբարի քերականություն, Երևան, 1964, էջ 140, **Туманян Э. Г.**, Древнеармянский язык, М., 1971, էջ 33:

³ Տե՛ս **Մուրադյան Հ. Դ.**, Հայոց լեզվի պատմական քերականություն, Երևան, հ. I, Հնչյունաբանություն, 1982, էջ 142:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 196-203:

⁵ Տե՛ս **Պետրոսյան Վ. Զ.**, նշվ. աշխ., էջ 115-127:

ձայնավորին»¹: Իսկ հունարենի *ou*-ն, նրա կարծիքով, *V* դարում արդեն վերածվել էր պարզ ձայնավորի, և որովհետև Մաշտոցն առհասարակ հետևել է հունական այբուբենի սկզբունքին, այդ հարցում ևս ընդօրինակել է *ou* [u]-ի երկգիր գրության ձևը: Ա. Մեյեն նույնպես հին հայերենի *ml*-ն դասել է ձայնավորների շարքում²: Հին հունարենի *ou*-ի՝ *V* դարում [u] արտաբերվելու մասին տեսակետը վարկածային բնույթ ունի, որի հարցում, մեր կարծիքով, կարող էր դեր խաղալ երկու հանգամանք. 1) ավանդական արտասանությունը, 2) *ou* երկբարբառի գոյությունը, որն ունեցել է [ou] (կարճ *u*-ով) արտաբերությունը (հմմտ. *ωτότος*): Բնական է՝ երկար *ou* [ou] և կարճ *ou* [ou] երկբարբառային տարբերակների պարզեցման դեպքում պարզ ձայնավորի կվերածվել կարճը: Բայց ամբողջ հարցն այն է, թե երբ է տեղի ունեցել այդ պարզեցումը. արդյոք *V* դարում, և ի՞նչ հիմքեր կան այդպիսի պնդման համար: Այդ երկբարբառների պարզեցման ժամանակի մասին տեսակետը վարկածային է: Մեր համոզմամբ, այն ավելի ուշ է տեղի ունեցել, և ինչպես *Z*. Հյուբշմանին է առարկել *Z*. Աճառյանը բառավերջի *l*-ի հնչյունական արժեքի (հմմտ. *հաշի՛ւ*, թե՛ *հաշիւ*) հարցի առնչությամբ, եթե *V* դարում հայերենի *ml*-ն պարզ ձայնավոր լիներ, ոչինչ չէր խանգարի Մաշտոցին, որպեսզի այն ևս մեկ գրով նշանակեր: Մաշտոցը հետևել է հունարենի այբուբենի սկզբունքին, բայց ոչ տառին: Բացի այդ, միանշանակ չէ նաև «հուն. *ou*=*hj*. ու» համապատասխանությունը³:

Հին հայերենի *ml*-ին երկբարբառային բնույթ է վերագրել հայերենագիտության մեկ այլ երախտավոր ևս՝ *Z*. Պեղերսընը⁴:

Հետևաբար, *mlaj*-ը համարժեք է քառաբաղադրիչ «*oway*»-ի և ոչ թե եռաբաղադրիչ «*uay*»-ի: Ըստ այդմ, *mlw*, *mlk*, *mlh*, *mln*, *mlt* կազմությունները պիտի համարել եռաբարբառակերպեր⁵. *mlt*-ն ևս ունի բաղադրիչների «*VSV*» կազմը, որովհետև հին հայերենի *t*-ն ևս եղել է պարզ, բայց՝ երկար ձայնավոր (*e*) և ոչ թե երկբարբառակերպ կամ երկբարբառ (*ej/ey*), ինչպես որ համարել են հայերենագետներից շատերը, չնայած որ այն հիմնականում ունեցել է երկբարբառային ծագում⁶:

¹ Հյուբշման *Z*. Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2004, էջ 70: Ի տարբերություն *Z*. Հյուբշմանի, որի կարծիքով բաղաձայնին հաջորդող և ձայնավորին նախորդող դիրքում *ml*-ն ունեցել է [վ/վ] արտաբերություն (հմմտ. *թուլոյ* արտաբերվել է *thovoy*, այլ ոչ թե *thovoy*) (տե՛ս նույն տեղում), Ն. Մառը այդ դիրքում *ml*-ին վերագրում է [ow], այսինքն՝ երկբարբառակերպային արժեք, որը, մեր կարծիքով, ավելի ճիշտ է. հմմտ. «... **թուականություն** պիտի կարդալ **θowakanθūn**» (տե՛ս **Март Н.**, Грамматика древнеармянского языка, СПб., 1903, с. 13-14):

² Տե՛ս **Meillet A.**, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, p. 40-41:

³ Տե՛ս **Պետրոսյան Վ. Ջ.** Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Երևան, 2015, էջ 226-227:

⁴ Տե՛ս **Պեղերսըն *Z.*** Նպաստ մը հայ լեզուի պատմութեան, Վիեննա, 1907, էջ 120:

⁵ Նշվածներից առաջին չորսը *E*. Աղայանը համարել է երկբարբառ, իսկ վերջինը՝ երկբարբառակերպ (տե՛ս **Աղայան *E. Բ.***, նշվ. աշխ.):

⁶ Տե՛ս **Петросян В.**, Диахроническая типология фонем *t* в древнеармянском и *ѣ* в старославянском языках // «ՀՀ», 2016, թիվ 1, էջ 128-141:

Այդ առումով կարևոր է նա երկու հանգամանք. 1) նշված կազմությունները արտաբերվում են մե^օկ վանկում, թե^օ տարբեր վանկերում, 2) բոլոր դիրքերում են հանդես գալիս իբրև երկբարբառ, թե^օ միայն բաղաձայնին նախորդող դիրքում:

Ըստ այդմ ուշագրավ են հետևյալ իրողությունները.

- 1) *Էայ, էի* եռաբարբառային կազմություններ, որպիսիք ճանաչել էին Չ. Աճառյանը և Ս. Ղազարյանը, պարունակող բառային օրինակների մեր որոնումները արդյունք չտվեցին, ուստի դրանց հարցը մնում է առկաի, մանավանդ որ հետագա քերականները նա այդպիսի կազմությունների առհասարակ չեն անդրադառնում¹:
- 2) Մեր կողմից ընդունված սկզբունքի համաձայն՝ *ւոյ* հաջորդականությունը, չնայած եռաբաղադրիչ կազմին՝ «S+V+S», ավելի շուտ համարժեք է երկբարբառի (հմմտ. այգ-ւոյ/ն (=այգու/ն), հոգ-ւոյ/դ, գին-ւոյ/ն)²:
- 3) *Եայ, էաւ* հաջորդականությունները, ըստ ամենայնի, արտաբերվում են մեկ վանկում (հմմտ. հ(ը)-րեայ/ք, քաւ-դէայ/ք [=աստղագուշակ/ներ], պաշտաւ-նէայ/ք, էաւթն, կդ-զէաւ/ք, և այլն):
- 4) Ինչպես նշվեց, տարակարծության տեղիք է տվել նաև *ու*- սկզբնաբաղադրիչով՝ *ուայ, ուաւ, ուոյ* հաջորդականությունների հնչույթաբանական կարգավիճակի հարցը: Նշված հաջորդականություններից առաջին երկուսը առավելապես հանդիպում են բայական ձևերում (հմմտ. լուայ (=լեցի), լուաւ, լուայք, լուայց (=լսեմ, կլսեմ), տուայ (=տվեցի), տուաւ, տուայք, տուայց (=տամ, կտամ)), ուաւ-ը՝ նաև մի քանի գոյականների գործիական հոլովաձևում (հմմտ. արուաւ/ք, լեզուաւ/ք, հովուաւ/ք), իսկ երրորդը՝ գոյականների սեռ.-տր. հոլովներում (հմմտ. թուոյ, պատուոյ/ն, նուոյ (=հարսի)): *Ու*- սկզբնաբաղադրիչով հաջորդականությունների հնչույթային արժեքի հարցը ուսումնասիրողները պայմանավորել են երկու հանգամանքով. 1) այդ բաղադրիչներն արտաբերվել են մե^օկ վանկում, թե^օ բաշխվել են երկու վանկի վրա, 2) երկրորդ ապառնիի կազմության ժամանակ *g>u* հնչյունական անցում տեղի^օ է ունեցել, թե^օ ոչ: Ըստ այդմ՝ ա) էթե բայաձևը կատարյալի եզ. թ. ձևերում, մասնավորապես՝ 3-րդ դեմքում, ստացել է *ե*- նախահավելվածը (աուգմենտը), ուրեմն միավանկ է (հմմտ. եկէզ (=այրեց), եմուտ, էբեր, եկաց, էտես, եդ, էտ և այլն), էթե չի ստացել, ուրեմն բազմավանկ է (հմմտ. հայեցաւ (=նայեց), թռեաւ, ան-

¹ Կան *էաւ, էի* հաջորդականություններ (հմմտ. յառնէաք, յառնէիք, յառնէին, ունէաք, ունէիք, ունէին (անց. անկ.) նն), որոնց երկբարբառային կազմություն լինելու հարցը, սակայն, միանշանակ չէ մեկ վանկում արտաբերվելու առումով: Ըստ վանկատման պարզ սկզբունքի, կլինի, օր., յառ-նէ-աք, ու- նէ-ին, այսինքն՝ *էաւ, էի* հաջորդականությունների բաղադրիչները կբաշխվեն տարբեր վանկերի վրա: Հետևաբար երկբարբառներ չեն:

² Տե՛ս **Պետրոսյան Վ. Զ.** Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, էջ 231:

կաւ, մարտեաւ, մնաց և այլն)¹. ք) եթէ երկրորդ ապառնիի կազմութեան ժամանակ *g>u* հնչյունափոխություն տեղի չի ունենում, ուրեմն բայա-
ձևը միավանկ է (տա*ց*եւ, տա*ց*է, տա*ց*ուք ևն), իսկ եթէ տեղի է ունենում,
ուրեմն միավանկ չէ (եկե*ս*ցեւ (<եկե*ց*ցեւ), եկե*ս*ցէ, եկե*ս*ցուք ևն)²:

Առաջին դրույթի առնչությամբ շ. Մուրադյանը նկատում է, որ նշված սկզբունքը ավելի հետևողական կիրառում է ունեցել *դնել* և *տալ* բայերի կատարյալի հարացույցում, որովհետև *ե-* նախահավելվածը ստացել են նաև երկու թվերի մյուս դեմքերի ձևերը, բացառությամբ *տալ* բայի հզն. թ. 1-ին դեմքի (հմմտ. *տուաք* (=սովեցինք)): Ավելացնենք, որ նախահավելվական *ե-* ն առկա է նաև *զալ* բայի կատարյալի (հմմտ. *էկի*, *էկիր*, *էկ*, *եկաք*, *էկիք*, *էկին*), 2-րդ ապառնիի (*էկից*, *էկեսցես* ևն), բուն հրամայականի (*ե՛կ*, *էկա՛ ք*), հորդորական հրամայականի (*էկեսջի՛ր*, *էկեսջի՛ք*) ձևերում, ինչպես նաև՝ անցյալ (*էկեալ*) և ենթակայական (*էկող*) դերբայներում: Նշված բայերի կատարյալի ձևերի առնչությամբ պիտի նկատի ունենալ հետևյալը.

Ա) Գրաբարի քերականություններում կատարյալ (perfect) համարված ձևերը համապատասխանում են հ.-ե. աորիստին: Աորիստը հնդեվրոպական հին լեզուներում անցյալի ժամանակային իմաստ արտահայտող հիմնական ձևն էր և բնորոշ է եղել հին հնդկերենին, հին հունարենին, փոյուգերենին, հին պավոներենին և հին հայերենին: Աորիստի ձևերը, բացառությամբ հին պլավոներենի, ստացել են նախահավելվական մասնիկ. հին հնդկ.՝ *a-*, մյուսներում՝ *e-* (հմմտ. սնսկ. *á-dhāt* «նա դրեց», հուն. *ἔ-θηκα*, հյ. ed, փոյուգ. *ε-δασε*): Ի տարբերություն հին հնդկ. և հին հունարենի, որոնցում նախահավելված ստանում են աորիստի եզ. և հզն. թվերի բոլոր ձևերը³, հին հայերենում այդ սկզբունքը խախտված է. բացառությամբ *զալ*, *տալ* և *դնել* բայերի, մյուսները նախահավելված ստանում են միայն կատարյալի (հին աորիստի) եզ. թ. 3-րդ դեմքում: Սա նշանակում է, որ հին հայերենի բայական համակարգը, առնվազն՝ աորիստի համակարգը, մյուս երկու լեզուների համեմատությամբ, ներկայացնում է զգալիորեն քայքայված վիճակ:

Բ) Ինչպես երևում է *տալ* բայի կատարյալի հարացույցից, նախահավելված չունի 6 ձևից միայն մեկը՝ *տուաք*: Արդյո՞ք ավելի հավանական չէ կարծել, որ այդ ձևը նախահավելվածը կորցրել է ուշգրաբարյան արտասա-

¹ Շ. Աճառյանը և Շ. Մուրադյանը հիշյալ հաջորդականությունները համարել են երկվանկ, իսկ Է. Աղայանը՝ միավանկ: Չնայած այդ հանգամանքին, Շ. Աճառյանը *m-* սկզբնաբաղադրիչով հաջորդականությունները համարել է երկբարբառներ (համապատասխանաբար՝ եռաբարբառներ), ինչպես և Է. Աղայանը, իսկ Շ. Մուրադյանը՝ ձայնավորների պարզ կապակցություններ, իսկ երկրորդները՝ «ու-ի և է, այ, աւ, ոյ երկբարբառների գուգորություններ» (տե՛ս Աճառյան Շ., նշվ. աշխ., էջ 593, Մուրադյան Շ. Գ., նշվ. աշխ., էջ 138, 142, Աղայան Է. Բ., նշվ. աշխ., էջ 131):

² Տե՛ս Աղայան Է. Բ., նշվ. աշխ., էջ 130:

³ Հմմտ. Семереньи О., Введение в сравнительное языкознание, М., 1980, с. 297-301, Савченко А. Н., Сравнительная грамматика индоевропейских языков, М., 1974, с. 273-279:

նական տեղաշարժերի ազդեցությամբ, երբ նշված դիրքում որոշակիորեն կարող էր փոխված լինել *ու*-ի հնչյունական արժեքը, այն է՝ վերածված լինել [վ]-ի կամ դրան մոտ արտաբերության, որի արդյունքում *տուաք* [towak']-ն էլ հնչեր իբրև [տըվաք/təvak'], այսինքն՝ դառնար երկվանկ՝ *տ(ը)-վաք*: Մեր դատողությունների հիմքում հին հայերենի *ու*-ի՝ որպես երկբարբառակերպի, իսկ նախագրաբարյան վաղ շրջանում՝ վաղնջահայերենում, երկբարբառի պատկերացումն է: Իհարկե, *ու*-ի երկբարբառային (երկբարբառակերպային) հնչյունական արժեքի մասին կարելի է խոսել միայն ենթադրաբար՝ նրան վերագրելով, օրինակ, [ouv] հնչյունական արժեքը, բայց ամբողջ հարցն էլ այն է, որ իրականում մեզ հայտնի չէ, թե հնչյունական ինչ արժեք է ունեցել կիսաձայն *ու*-ն: Կարծում ենք՝ **ետուաք* *[etowak']-ի ոչ դյուրին արտաբերությունը, համաձայն լեզուների բնորոշ արտասանական էներգիայի խնայողության կամ «նվազագույն ճիգի» սկզբունքի¹, ժամանակի ընթացքում ձգտել է պարզեցման, ինչն էլ ուշգրաբարյան փուլում հանգեցրել է *ե*- նախահավելվածի կորուստի: Հետևաբար, *ուա*-ն, ըստ ամենայնի, ունեցել է միասնական արտաբերություն, այն է՝ երկբարբառային՝ [oua]՝ նախագրաբարյան փուլում և երկբարբառակերպային [owa]՝ գրաբարյան փուլում, իսկ բառաձևն էլ ամբողջությամբ եղել է միավանկ: Այն երկվանկ է դարձել *ե*- նախահավելականով՝ **ե-տուաք*: Այսինքն՝ *ուա*-ն բոլոր դեպքերում արտաբերվել է մեկ վանկում՝ որպես միասնական բաղադրիչ:

Գ) Եթե այդպես է, ուրեմն *ուայ*, *ուալ*, *ուոյ* գուգորդություններն էլ հնչույթների պարզ հաջորդականություններ չեն, այլ հնչույթաբանական մեկ միավորի արժեքով բաղադրիչներ, ըստ իս՝ նույնպես եռաբարբառներ (չնայած քառաբաղադրիչ կազմին):

5) Ի տարբերություն Հ. Աճառյանի, որը երկբարբառային/եռաբարբառային կազմությունների բնույթը չի պայմանավորում դիրքային արտաբերությամբ, այն է՝ բոլոր դիրքերում *ու* և *յ* կիսաձայնների վերագրում է ձայնավորական արժեք², Է. Աղայանը, Հ. Հյուբշմանի հետևողությամբ, ձայնավորների միջև և բառավերջի դիրքերում *ու*-ին և *յ*-ին վերագրում է բաղաձայնական արժեք, ուստի, օր., *տուայ*, *տուալ*, *թուոյ* բառաձևերի կազմում նա տարբերակում է ոչ թե *ուայ*, *ուալ*, *ուոյ* եռաբարբառներ, այլ «ուա/ուո երկբարբառ+յ/լ բաղաձայն» կապակցություններ³: Մենք կարծում ենք, որ բոլոր դիրքերում էլ *ու* և *յ* կիսաձայնները պահպանել են իրենց ձայնորդական արժեքը: Ըստ էության, լինելով երկբնույթ հնչույթներ, որոնց մեջ համադրված են ն՝ ձայնավորական, և՝ բաղաձայնական հատկանիշներ, բաղաձայնին

¹ Տե՛ս **Мартине А.**, Принцип экономии в фонетических изменениях, М., 1960, с. 126-198:

² Հմնտ. «Մենք կարծում ենք, որ **ալ**, **եա**, **իլ** ամեն դեպքում էլ հնչվել են au, eu, iu (ա՛ու, է՛ու, ի՛ու) և ոչ բնավ av, ev, iv, նույնիսկ բառերի վերջում. ապա թե ոչ ի՛նչ պատճառ ունեթ Մեարոպը չգրելու **հաշիվ**, այլ **հաշիլ**» (տե՛ս **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 588):

³ Տե՛ս, օրինակ, **Հյուբշման Հ.**, նշվ. աշխ., էջ 69-71, **Աղայան Է. Բ.**, նշվ. աշխ., էջ 112-128:

նախորդող դիրքում նրանց արտաբերությունը ավելի հակված է եղել դեպի ձայնավորական հնչումը (հմմտ. տուալք [towaɬkʰ], թուոյն [t'owoɔn]), իսկ բառավերջի և հատկապես ձայնավորների միջև դիրքում դեպի բաղաձայնական հնչումը (հմմտ. նուոյ [nowoɣ] (սեռ.-տր.), արքայ [arqay], բայց (յ) արքայե [(y)arqayē], կաթսայ [kat'say], բայց (ի) կաթսայե [i kat'sayē], շղթայ [šyt'ay], բայց (ի) շղթայե [i šyt'ayē], աշագ [avag], հաշատամ [havatam] ևն): Կիսաձայնների բաղաձայնական հնչումը ավելի զգալի պիտի լիներ ձայնավորների միջև դիրքում, ներառյալ հնչաշղթայում բառավերջի դիրքը, երբ լ-ին կամ յ-ին հաջորդել է ձայնավորով սկսվող բառ, այսինքն՝ կրկին երկու ձայնավորների միջև դիրքը (հմմտ. «... իսկ Բէլ հեզ և հանդարտ ամբոխի մեծաւ ի ձախմէ ջուրցն ի վերայ ռստոյ միոյ, իբրև ի դիտանոցի»¹, «Եւ հասեալ երկոցունց կողմանց սկայիցն ի միմյանս՝ ահագին դրդմունս ի վերայ երկրի առնէին շահատակելով, և ահս պակուցանողս տարագուք յարձակմանց սկայագունքն գմիմեամբք արկանէին»²): Ի և յ կիսաձայնների դիրքային տարբերակները միմյանց նկատմամբ գտնվում են այլահնչակային հարաբերության մեջ, այսինքն՝ դրանք միննույն՝ W կամ Y հնչույթի տարբերակներն են՝ [w/ɰ], [y/j] հարաբերակցությամբ:

6) Կարծում ենք՝ «միայն» բառում իայ եռաբարբառի տարբերակումը արդարացված չէ. «միայն»-ը երկվանկ բառ է՝ մի-այն վանկատումով, հետևաբար իայ հաջորդականության բաղադրիչները բաշխվում են տարբեր վանկերի վրա: Այդպիսի վանկատման օգտին է վկայում նաև այն հանգամանքը, որ «միայն»-ը բարդ բառ է՝ «մի(<մեկ>+այն» կազմությամբ, բառային շեշտը, ըստ ամենայնի, ընկնում է առաջին՝ «մի» բաղադրիչի վրա, որն իր հերթին լրացուցիչ արգելք է «միայն»-ի կազմում իայ հաջորդականության բաղադրիչների սերտ միասնություն կազմելու համար:

7) Եռաբարբառային կազմությունների առնչությամբ ուշագրավ հարցադրումներից մեկը «եայ»-ի [իայ] արտաբերության մասին տեսակետն է, որն արտահայտել է Է. Աղայանը³: Ընդհակառակը, Հ. Աճառյանը և Հ. Մուրադյանը պաշտպանել են եայ-ի [եայ/eay/eai] (համապատասխանաբար՝ եա-ի [եա/ea]) արտաբերության տեսակետը⁴: Եա-ին [ea] հնչում վերագրելու Հ. Աճառյանի մոտեցումը է. Աղայանը բացատրում է նրա կողմից առանձին իա [ia] երկբարբառ տարբերակելու հանգամանքով⁵: Մեր կարծիքով, սակայն, Հ. Աճառյանի դիրքորոշման հիմքում պարզապես երևույթները մաշտոցյան «մեկ հնչյուն (իմա՝ մեկ հնչույթ՝ Վ. Պ.)-մեկ տառ» սկզբունքին հնարավորինս հարազատ մնալով բացատրելու մղումն է, որն ակնհայտ է նաև այլ

¹ Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1991, էջ 35:

² Նույն տեղում, էջ 36:

³ Տե՛ս Աղայան Է. Բ., նշվ. աշխ., էջ 91-92, 123-126:

⁴ Տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 589-590, Մուրադյան Հ. Գ., նշվ. աշխ., էջ 143-146:

⁵ Տե՛ս Աղայան Է. Բ., նշվ. աշխ., էջ 124:

դեպքերում: Իհարկե, մաշտոցյան սկզբունքի հետևողական կիրառման դեպքում ևս հին հայերենի հնչյութաբանական և հնչյունաբանական իրողությունների մեկնությունը չի հեշտանում, մեր համոզմամբ, սակայն, խնդիրներն ավելի հաճախ առաջ են գալիս, և իրականությունից մենք ավելի ենք հեռանում այն դեպքերում, երբ, առերևույթ ընդունելով մաշտոցյան այբուբենի ստեղծման վերոհիշյալ սկզբունքը, իրականում փորձում ենք միանգամայն այլ դիրքերից բացատրել այս կամ այն երևույթը: Պիտի նկատել, որ Հ. Աճառյանը ևս լիովին հետևողական չի գտնվել մաշտոցյան սկզբունքի կիրառման հարցում (օր., նա ևս *ու*-ն համարել է պարզ ձայնավոր՝ այդ հարցում, թերևս, հետևելով իր ուսուցիչների՝ Հ. Հյուբշմանի և Ա. Մեյեի օրինակին, որը, մեր կարիծքով, հակասում է մաշտոցյան այբուբենի հորինման տրամաբանությանը), բայց և այնպես նա ամենից քիչն է հեռացել հիշյալ սկզբունքից: Ե//ե//ի հերթագայությունները հնարավոր են դարձնում թե՛ մեկ և թե՛ մյուս մեկնաբանությունը, այսինքն՝ *ես*-ին ինչպես [ea], այնպես էլ [ia], *եայ*-ին ինչպես [eay], այնպես էլ [iay] հնչում վերագրելը (հմմտ. Հերակլէս-Հերակլէայ, Մովսէս-Մովսէսի-Մովսիսի, լէսոն-լերինք, ատէան-ատենի, դէ-դիի, տէր-տէսոն, գէս-գիսաւոր, դէզ-դիզի, ծէս-ծիսի, աղուէս-աղուէսու-աղուիսու, որդի-որդէակ (<որդի+ակ), կղզի-կղզէակ և այլն), բայց միայն առաջինն է բխում մաշտոցյան այբուբենի ստեղծման տրամաբանությունից¹:

8) Եռբարբառակերպեր պիտի համարել նաև *ուա* (տուաք «տվեցինք»), *ուի* (լուիցես «լսելու եմ, լսեմ, կլսեմ, պիտի լսեմ»), *ուո* (տուոդ «տվող»), ուե (թուեմ, «հաշվել, կարծել», թուեսցի) և *ուէ* (նուէր, կուուէր) հնչյունական հաջորդականությունները, որովհետև, վերը շարադրված սկզբունքների համաձայն, հին հայերենում առավել հավանական է նրանց միասնական (=միավանկ), քան թե տրոհված (=երկվանկ) արտաբերությունը: Ըստ ամենայնի՝ երկվանկ *լուիցես*, *լուիցէ* տիպի բառերի վանկաբաժանը անցել է *ի* և *ց* հնչյունական բաղադրիչների միջով (հմմտ. *լուիցես*, *լուիցէ*): Ինչ վերաբերում է *ուէս* հաջորդականությանը (հմմտ. *տուէսլ*, *լուէսլ* «տալ» և «լսել» բայերի անցյալ դերբայները), ապա, գտնվելով երկու ձայնավորների միջև, *ւ* ձայնորդը ի հայտ է բերում առավելապես բաղաձայնական որակներ՝ սահմանաբաժան դառնալով *ո*-ի և *է*-ի միջև. այն *ո*-ի հետ ձևավորում է երկբարբառակերպ, իսկ *է*-ն երկբարբառային միասնություն է կազմում հաջորդող *ա* ձայնավորի հետ (հմմտ. *տուէսլ*, *լուէսլ*): Հետևաբար նշված տիպի բառաձևերում պիտի ճանաչել «ու երկբարբառակերպ+էս երկբարբառ» հաջորդականություն: Ասվածը միաժամանակ նշանակում է, որ ինչպես երկբարբառային, այնպես էլ եռբարբառային կազմությունների տարբերակման համար հնչյունական բաղադրիչի դիրքը հնչաշղթայում, այնուամենայնիվ, կարևոր է:

¹ Տե՛ս նաև Պետրոսյան Վ. Զ., Հայկական և հնդեվրոպական երկբարբառային համակարգերը, էջ 120-121:

Այսպիսով, գրաբարյան փուլում հին հայերենը մաքուր եռաբարբառներ չի ունեցել, այլ ունեցել է՝ 1) *եայ, էաւ, ուա, ուի, ուն, ուե* և *ուէ* եռաբարբառակերպերը՝ «V₁+V₂+S» և «V₁+S+V₂» կաղապարներով և 2) *ուայ, ուաւ, ուոյ* եռաբարբառները (պայմանական ըմբռնումով)՝ «V+S+V+S» տիպի կաղապարով, որոնցում երկու ձայնորդի առկայությունը մեկ վանկի կազմում կարող է համարժեք դիտվել մեկ ձայնավորի:

Вардан Петросян – Трифтонговые образования в древнеармянском языке (синхронный аспект)

Трифтонговые сочетания древнеармянского языка изучаются в арменистике, по существу, до настоящего времени неиспользованными принципами. В частности, 1) сочетания модели «V₁ + V₂ + S» (сравн. *եայ, էաւ*) рассматриваются в качестве трифтонгоидов, а не трифтонгов, при учете того, что звуки *ւ(w)* и *յ(y)* в древнеармянском языке не выполняли присущую гласным функцию; 2) *ու* считается таким же дифтонгическим сочетанием, как и *աւ, իւ, էւ, այ, ոյ*, а не простым гласным, как это принято в арменистике; соответственно, сочетания типа *ուայ, ուաւ* в общепринятом понимании являются трифтонгами, если наличие двух звуков в одном слове будет считаться эквивалентным одному гласному; 3) трифтонгоидами являются также сочетания *ուա, ուի, ուն, ուե* и *ուէ* со структурой «V₁ + S + V₂». По убеждению автора, такой подход вытекает из соответствия "один звук – одна буква", присущего алфавиту Маштоца, что отмечали все арменисты, но не всегда были последовательны при его использовании. Использование данных принципов при исследовании дает основание говорить о том, что в древнеармянском языке не было чистых трифтонгов, а были только трифтонгоиды и условные трифтонги. Последние, по существу, также являются трифтонгоидами, которые вместо трехкомпонентного строения первых имеют четырехкомпонентное строение.

Vardan Petrosyan – Old Armenian Triphthongal Combinations (a Synchronic Approach)

Old Armenian triphthongal combinations are discussed by the methods, which essentially have not been applied within the scope of Armenian Studies so far. In particular, 1) the combinations of the model «V₁+V₂+S» (cf. *եայ, էաւ*) are considered to be triphthongoids, rather than triphthongs taking into consideration the fact that the sonorous sounds *ւ(w)* and *յ(y)* did not carry out a function of a vowel in Old Armenian; 2) *ու* is considered a diphthongoid similar to the combinations *աւ, իւ, էւ, այ, ոյ* and not a simple vowel, as it is accepted in Armenian Studies. Accordingly, the combinations of the *ուայ, ուաւ* type are triphthongs only conventionally, as the presence of two sonorous sounds in one syllable is considered an equivalent of one vowel sound; 3) the combinations *ուա, ուի, ուն, ուե* and *ուէ* are also considered to be triphthongoids, in which the structure «V₁+S+V₂» is present. According to the author, this kind of an approach comes from the peculiarity of Mashtot’s alphabet - “one sound per one letter”, which was emphasized by all Armenologists, but who did not consistently apply it. The use of these principles in the present study gives grounds to say that Old Armenian did not have pure triphthongs, but only triphthongoids and conventional triphthongs. The latter, in essence, are also triphthongoids, which instead of a three-component structure of the former have a four-component structure.